ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՍՈՒՐԵՆ ԳՅԱՆՋՈՒՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ պարուսույց, ՀՀ ժողովրդական արտիստ Սուրեն Գյանջումյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մարշալ Բաղրամյան պողոտայի թիվ 75 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՈՒՐԵՆ ԳՅԱՆՋՈՒՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սուրեն Գյանջումյանը ծնվել է 1939 թվականի հունիսի 19-ին Երևանում:

Որպես մենապարող հանդես է եկել Երվանդ Սահառունու անվան երգի-պարի անսամբլի կազմում՝ Վանյա Ղարիբյանի ղեկավարությամբ: 1957 թվականին ստեղծել է էլեկտրաճշգրիտ սարքերի գործարանի պարի համույթը, 1958-1983 թվականներին՝ առևտրի տան երգի-պարի և մանկապատանեկան անսամբլները: 1967-1977 թվականներին դասավանդել է Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական ուսումնարանում որպես ռիթմիկայի, պլաստիկայի, պարարվեստի դասախոս: 1967-1971 թվականներին ստեղծել և ղեկավարել է Երևանի Երկաթուղայինների մշակույթի կենտրոնի ժողովրդական պարի անսամբլը, 1965 թվականին ստեղծել և ղեկավարել է համաշխարհային և միջազգային փառատոների բազմակի դափնեկիր «Կանազ» ժողովրդական պարի համույթը, 1973 թվականին՝ հանրապետական և միջազգային փառատոների դափնեկիր «Գարուն» մանկապատանեկան պարային համույթը: 1966-1977 թվականներին սովորել է Սանկտ Պետերբուրգի արհմիութենական բարձրագույն դպրոցում: 2009 թվականից դասավանդել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պարարվեստի մանկավարժության ամբիոնում:

Բեմադրել է մի շարք պարային ստեղծագործություններ՝ «Բերդ», «Զմրուխտի», «Շորոր», «Ձախորդ որսորդներ», «Հայ քաջեր», «Շալախո», «Շատախի խաղ-պար», «Եղեգնաձորցիներ», «Օսեթական», «Մոլդովական», «Գնչուական», «Զուռնի-տրնգի», «Վրացական զույգ պար», «Նաիրյան աղջիկներ», «Էրեբունի» և այլն:

1984 թվականին արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի, 2004 թվականին՝ Երևանի պատվավոր քաղաքացու, 2007 թվականին՝ Հայաստանի ժողովրդական արտիստի կոչման:

Սուրեն Գյանջումյանը մահացել է 2019 թ. մայիսի 14-ին:

Սուրեն Գյանջումյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մարշալ Բաղրամյան պողոտայի թիվ 75 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել նրա որդու՝ Գագիկ Գյանջումյանի կողմից: Հուշատախտակի պատրաստման և տեղադրման ֆինանսական ծախսերը կատարելու է Ս. Գյանջումյանի ընտանիքը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ